

Հայրենասէ՛ր, նպաստէ գէթ աղիւսով մը հայագիտութեան շինուածքին կառուցման, եւ պիտի հնձես շնորհակալիքը հայ բանասիրութեան. գրուէ՛ բաժանորդ «Հանդէս Ամսօրեայ»ի:

Հայրենասէ՛ր, եթէ չես գտներ «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ յագուրդ քու ճաշակիդ, տո՛ւր գոհացում հայ գրագէտներու, ուսուցիչներու ծարաւին, գրէ՛ զանոնք բաժանորդ «Հանդէս Ամսօրեայ»ի:

Հայրենասէ՛ր, եթէ անձամբ չես կարող հետաքրքրուիլ «Հանդէս Ամսօրեայ»ով, տո՛ւր գրգիռ երիտասարդ սերունդին, գրէ՛ բաժանորդ դպրոցներն ու որբանոցները:

Հայրենասէ՛ր, եթէ չունիս միջոց գրուելու բաժանորդ, չարժէ՛ ընկերդ, յորդորէ՛ դրացիդ որ գրուի բաժանորդ «Հանդէս Ամսօրեայ»ի:

Ամէն ջանք Ազգին համար, ամէն վաստակ եւ զոհաբերութիւն հայ մշակոյթի պայծառութեան համար:

Խմբագրութիւն «Հանդէս Ամսօրեայ»ի:

### ՉԱՅՆԵՐ Ի ՆՊԱՍՏ «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ», Ի

ԳՆԱՀԱՏԱՆՔՆԵՐ «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»Ի ՄԱՍԻՆ

Յաջորդ տողերս թող վկայեն թէ ինչպէս ընթացած է «Հանդէս Ամսօրեայ» իւր ճանապարհին վրայ եւ ինչպէս զնահատուած է հայ աշխարհին եւ առ հասարակ Եւրոպայի մէջ: Յառաջ կը բերենք մաս մը միայն այն բազմաթիւ համակրական խօսքերէն, որոնք ուղղուած են Խմբագրութեանս թղթով կամ հրատարակագրութեան մէջ այլ եւ այլ առիթներուն:

«Հանդէս Ամսօրեայ», իր հրատարակութեան ԽՅ. տարիներու ընթացքին, արդարացուցած է իր ուսումնական թերթի կոչումը:

Եւրոպացի արեւելագէտներու եւ մանաւանդ հայագէտներու կողմէն Հայոց մասին, Հայ լեզուի, Հայ Պատմութեան եւ Հայ Մատենագրութեան, ինչպէս նաեւ Հայ Գեղարուեստի ու Հայ Հնագիտութեան շուրջ կատարուած բոլոր հետազոտութիւններ եւ ուսումնասիրութիւններ, «Հանդէս Ամսօրեայ»ի սիւնակներուն մէջ, մատչելի եղած են հայ բանասէրներու, եւ փոխադարձաբար «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ հրատարակուած հայերէն ուսումնասիրութիւններ՝ դիւրութեամբ գրուած են Եւրոպացի Հայագէտներու աչքին սուղեւ:

«Հանդէս Ամսօրեայ»ի այս ծառայութիւնն ո՛չ միայն կ'աւելցնէ հրատարակչի հայ մտքի արտադրութեանց արժէքներուն, հանդէպ Եւրոպայի գիտական կամ ուսումնական աշխարհին, այլ նաեւ այս թանկագին հրատարակութիւնը հիանալի ազդակ մը եղած է Հայկական Դատին, գոնէ գիտուններու եւ ուսումնականներու շրջանակին մէջ հասկցողութիւնը դիւրացնելու եւ համակրանք ճառագայթեցնելու համար:

Անոնք որ կը սիրեն լուրջ ուսումնասիրութիւնները եւ մտաւորական բարձր զբաղումները եւ կը փափաքին օտար չմտալ Հայագիտական նիւթերու մշակումին, անպայման ունենալու են «Հանդէս Ամսօրեայ» իրենց գիրքերուն եւ թերթերուն շարքին մէջ:

Բարգէն Ա. Կարողիկոս:

Անթիլիաս, 20 Նոյ. 1931:

«Քառասուն տարի անցած է այն օրէն ի վեր, երբ 1886ի Նոյեմբերին առաջին անգամ լոյս տեսաւ «Հանդէս Ամսօրեայ»-ն, որով Վիեննայի Մխիթարեանք հրատարակ կը դնէին իրենց գիտական գործունէութիւնը: Սկիզբէն իսկ իրենց գլխաւոր նպատակներէն մէկն եղած էր ուսումնասիրել ու հետազօտել հայրենի Մատենագրութիւնը, Պատմութիւնն ու Լեզուն՝ զօհելով ի հարկին նոյն իսկ այն ազգային ականջութիւնները, որոնք անշուշտ սիրելի էին իրենց ալ: Այսպէս սկսան նոր հիմքի վրայ դնել Հայոց Քաղաքական ու Եկեղեցական Պատմութիւնը, Մատենագրութիւնը, Ազգագրութիւնը, Լեզուն եւ Բարբառագիտութիւնը: Թէ ի՞նչ արդիւնքներ ձեռք բերաւ ուսումնասիրական եւ քննադատական եռանդուն գործունէութիւն մը, միայն մասնագէտն եւ ա՛յն, որ հայերէնագէտ է, կարող է դասել: Այսպէս «Հ. Ա.» դարձաւ ամէն կողմէ զնահատուած եւ միակ հայ Ուսումնասիրութիւն, որուն շուրջը հաւաքուեցան բազմաթիւ գիտնական հայեր եւ օտար ականաւոր հայագէտներ: ... «Հանդէս Ամսօրեայ»-ն անհրաժեշտութիւն մըն է անոնց համար, որոնք կը ցանկան հայկական ուսումներով պարսպիլ: Հայերէնի նշանակութիւնն առ սակաւ սակաւ կ'աճի, նոր ուղիներ եւ հեռանկարներ կը պարզուին: Կը մաղթենք, որ «Հ. Ա.» այն ճամբով, որուն վրայ գործած է մինչեւ ցայսօր, ընթանայ յառաջ՝ յօգուտ գիտութեան: Այս մաղթանքը, զոր Armeniaca թերթը կ'ուղղէ «Հ. Ա.»-ի քառասնամեակին առթիւ, թող բերական մ'ըլլայ այն մեծ յարգանքին, զոր Արեւմտեան գիտական աշխարհը կը մատուցանէ անոր ուսումնասէր աշխատակիցներու հետազօտութիւններուն»:

«Աստուած յաջողութիւն տայ»:

Dr. K. Roth, Armeniaca, 1927, էջ 128:

«Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան հոյակապ ուսումնասիրութիւնը «Հանդէս Ամսօրեայ» գիտնականօրէն ուղած է տօնել իւր Քառասնամեակը: Առ այս աշխատած է Պմբագրութիւնը ի մի հաւաքել Եւրոպացի հայագէտներու կողմէն գրուած մանր ուսումնասիրութիւններ, որոնք հրատարակի վրայ կը գրուին «Հ. Ա.»-ի 1927 տարւոյ վերջին թուով:

Այս ստուար հատորի մէջ ամփոփուած ... գեղեցիկ հաւաքածոյքս յայտնաբարբառ եւ կարկառուն ապացոյց մըն է այն ծառայութիւններուն, զորոնք կարող են մատուցանել հայագիտական ուսումնասիրութիւնները պատմական գիտութեան զանազան ճիւղերու մէջ, եւ այն արժանիքին, զոր Մխիթարեան Հայրերը երեւան կը բերեն անդուլ աշխատանքներով գուն գործելով պահել ու ծախօթացնել իրենց Ազգին անցեալի հարստութիւններն ու զանձեքը»:

M. M. ի թերթին Revue d'Histoire ecclésiastique, t. 25 (1928),  
էջ 951—954:

«Մասնագիտական շրջաններուն քաջամնօթ ուսումնասիրութիւն՝ «Հանդէս Ամսօրեայ»-ի յորելինական բացառիկ թիւը լոյս տեսաւ ճօն բովանդակութեամբ եւ ստուար ծաւալով: ... Չորս տասնեակ տարիներու ընթացքին այս տեղէն այնպիսի ընդարձակ ուսումնասիրական գործունէութիւն մը ծաւալած է Հայոց Պատմութեան, Լեզուի եւ Մշակոյթի մասին, այնքան թանկագին, գիտական եւ հարուստ նիւթեր մատչելի եղած են, որ առանց քաջ ուսումնասիրելու «Հանդէս Ամսօրեայ»-ի հատորները հազիւ թէ հնարաւոր ըլլայ զբաղիլ հայ Բանասիրութեամբ եւ Պատմութեամբ: Իր նպատակակէտին հասնելու համար «Հանդէս Ամսօրեայ»-ն հաւաքած է իր շուրջը բազմաթիւ հայերէնագէտ գիտնականներ, որոնք սիրայօժար դրած են ի սպաս իրենց գործակցութիւնը, այսու իրենց յարգանքի պարտքը հատուցանելու համար Պմբագրութեան ... Նաեւ ինձ համար պարծանք եւ ուրախութիւն է նման գործի մը համեստ չափով աշխատակցած ըլլալս»:

Dr. Robert Bleichsteiner (Վիեննա), ի թերթին «Anthropos»,  
1929, էջ 354:

«Մեծ են այն ծառայութիւնները, զոր Վիեննայի Միսիթարեան Միաբանութիւնը մատուցած է հայ բանասիրութեան: Իր հրատարակած «Ամսօրեայ Հանդէս»ը թանկագին ու բազմօգուտ պարբերական մըն է, որ երկար տարիներէ ի վեր կը ձգտի Հայոց ազգային պատմութեան, լեզուի, մատենագրական պատմութեան այլազան հարցերը լուսարանել մերօրեայ գիտական ոգևոյլ ու մեթոդներով, մեր ցեղի անցեալ մշակութային կեանքի մութ մնացած կէտերը կ'աշխատի ճշմարտութեան ջանով պարզել: Ու այդ ամսագրին մէջ երեւցած մեծարժէք ուսումնասիրութիւնները... կը ներկայացնեն պատկառելի վաստակ մը, որուն համար հայ ժողովուրդը երախտագիտութեան պարտք ունի այդ բազմարդիւն մտաւոր Տան հանդէսը:

«Հանդէս Ամսօրեայ»ին զօրացման ու զարգացման նպատակը ազգասիրական գործ մը պէտք է նկատէ ամէն գիտակից Հայ»:

Փարիզ, 19 Նոյ. 1931:

Ա. Զօպանեան:

...«Հանդէս Ամսօրեայ» հաւատարիմ է մնացել այն գերազանցապէս ազգօգուտ նպատակին, որ ծրագրել էր նրա մեծանուն հիմնադիրը՝ Գեր. Այտընեան: Հետզհետէ ընդարձակելով իր սկզբնական ծրագիրը՝ «Հ. Ա.» դարձաւ մեր մէջ հայագիտութեան եւ հայ բանասիրութեան նուիրուած լաւագոյն ուսումնաթերթը: Լրջամիտ հայ ուսումնականներ եւ եւրոպացի բազմաթիւ հայագէտներ խոստովանել եւ գնահատել են «Հանդէս»ի այս յատկութիւնն եւ մեծ արժանիքը: Ուստի հայ բանասիրութեան եւ առհասարակ հայ մտքի զարգացման համար ծանր հարուած պիտի լինէր, եթէ Հ. Ա.՝ տիրող տնտեսական հանգամանքների հետեւութեամբ հարկադրուէր, նոյն իսկ ժամանակաւորապէս ընդհատել իր բազմարդիւն ընթացքը:

Բրիւսէլ, 14 Նոյեմբ. 1931:

Առաքել Սարուխան:

«Հմտական եւ քննադատական նշանաւոր գործեր լոյս տեսած են «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ...: Առանց վարանելու պէտք ենք ըսել՝ թէ «Հանդէս Ամսօրեայ» հայագիտութեան կարեւոր օրգան մըն է, իր գիտական գիրքով, որ պատիւ կը բերէ Վիեննայի Միաբանութեան: Կր գովենք Խմբագրութեան նոր ձեռնարկութիւնը...

որ հայերէն գրուած գլխաւոր ուսումնասիրութիւններուն գերմաներէն ամփոփումը կը հրատարակէ: Այս ամփոփումը հնարաւոր պիտի ընէ, որ թերթն աւելի լայն տարածում գտնէ, որուն արժանի է իսկապէս»:

J. Muyldermans, Le Muséon, 1930, էջ 130—131:

«Այն ծառայութիւնը, որ մատուցել է «Հ. Ա.» հայ բանասիրութեան, լեզուագիտութեան... եւ առհասարակ բովանդակ հայագիտութեան, վեր է ամէն մի գովասանքից: Դժուար իսկ է պատկերացնել մեր մատենագրութեան եւ անցեալի քննական ուսումնասիրութիւնը վերջին քառասուն տարիների ընթացքին՝ առանց այս պատկառելի ուսումնաթերթի: Այտընեանի ձեռքով հիմնուած, Հ. Տաշեանի, Հ. Ակինեանի եւ ուրիշ միաբանակիցների գիտական շունչով բեղմնաւորուած, «Հանդէս»ը այժմ էլ շարունակուած է իր հայագիտական մեծ առաքելութիւնը: Հրատարակուելով գերման ուսումնականութեան մի այնպիսի կենդրոնում, որպիսին է Վիեննա, «Հանդէս»ը իւրացրել է նաեւ գերման գիտութեան քննական ոգին: Այդ ոգևոյլ էլ ընթացել է, սկզբից մինչեւ օրս, «Հանդէս Ամսօրեայ»ն»:

Դկտ. Ա. Արեղեան, «Հայրենիք» ամսագիր, է (1928), Թիւ 4, էջ 73:

«...Մեծ է Միսիթարեան Միաբանութեան դերը մեր ազգային կերպարանքի պահպանութեան մէջ: Աւելի քան երկու դար նա մեղկապաճ է մեր անցեալ փառքին ու ճակատագրին եւ անվիճելի ապացոյցներ է տալիս հայի իմացական կարողութեան եւ գիտական անչահախնդիր հետաքրքրութեան: Նա հայ լեզուով ստեղծում է եւրոպական գիտութիւն հայ կեանքի մասին եւ խոհական սահմանափակումով մշակում է հայագիտութեան արգասանդ դաշտը, զօրացնելով մեր ազգայնութեան հիմունքները եւ հարստացնելով համարակալային գիտութիւնը: Այս ոգին արդէն յատկանիչն է Չեր Միաբանութեան: ... Աղքատացանք ազգովին. դրա ազդեցութիւնը կրում էք եւ Դուք: Եթէ հանրամատչելի թերթերը հաղիւ ապրում են եւ վէպ ու բանաստեղծութիւն դժուար են սպառում՝ աւելորդ է խօսել «Հ. Ա.»ի նման մասնագիտական թերթի տարածման մասին: Նա կարող է լուսամիտ հարուստների դրամով միայն պահուիլ, որ դժբախտաբար շատ չեն մեղանում: Ռուսաստանի հայը հարստանալ չի կարող, իսկ դուրսի հայը հասած չէ այն բարձրութեան, որ մասնագիտական աշխատանքի արժէքը հասկանայ:

Պէտք է տոկալ ուրեմն եւ սպասել լաւագոյն օրերի եւ ամէն  
 գնով պահել «Հ. Ա.»ն: Ես հաւատում եմ որ հետու չէ մեր փրկու-  
 թեան ժամը: Այդ հաւատքը տեսնում եմ եւ Միաբանութեանդ յա-  
 մառութեան մէջ՝ շարունակելու Մեծ Միխիթարի գործը մինչեւ իսկ  
 ամենածանր նիւթական նեղութեանց մէջ: Եւ մեր հաւատքը մեզ  
 կ'ապրեցնէ»: . . .

Բէյրութ, 28 Փետր. 1931:

Ն. Աղբալեան:

### ՅԱՐԳԵԼԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Հաճեցէք գրել զիս բաժանորդ «Հանդէս Ամսօրեայ» պատուա-  
 կան Ուսումնաթերթիդ:

Բաժանորդագիւնը 5 տուր կամ սոյն դումարիս համապատաս-  
 խանող ..... Փրանկ կամ մարկ հաճեցէք գտնել ներփակ:

Իմ հասցէս է՝

անուն .....

քաղաք .....

փողոց .....